ՏԵՂԵԿԱՆՔ

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 15. Կենդանիների քանակի կարգավորումը

Բացառիկ դեպքերում (բնակչության, վայրի և ընտանի կենդանիների համաճարակային հիվանդություններ, անասնապահության զարգացմանը վտանգի սպառնում, էկոլոգիական հավասարակշռության խախտման վտանգ) անցկացվում են վայրի կենդանիների առանձին տեսակների քանակը կարգավորող միջոցառումներ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

Կենդանիների առանձին տեսակների քանակը կարգավորող միջոցառումները վնաս չպետք է պատճառեն այլ տեսակներին և դրանց ապրելավայրին: , ինչպես նաև չպետք է իրականացվեն դաժան, անմարդկային մեթոդներով, այդ թվում ոչնչացմամբ՝ զենքի կիրառումով:

Թվաքանակի կարգավորման ենթակա կենդանիների տեսակներն ու միջոցառումների անցկացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 19. Կենդանական աշխարհի պաշտպանությունը

Կենդանական աշխարհի օբյեկտների պաշտպանության նպատակով արգելվում է՝

ա) կենդանական տեսակների ապօրինի ներմուծումը Հայաստանի Հանրապետություն, տեղափոխումը այլ ապրելավայր, կլիմայավարժեցումը և սելեկցիոն նպատակներով օգտագործումը.

բ) պարարտանյութերի և թունանյութերի չկանոնակարգված օգտագործումը.

գ) կենսաբանական տեխնոլոգիաների միջոցով ստացվող ձևափոխված նոր կենդանի օրգանիզմների ինքնակամ օգտագործումը.

դ) կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքը և խոշտանգումը:, ինչպես նաև զենքի կիրառմամբ ոչնչացումը: